

# Ա Ր Ա Բ Ա Տ Ս

## ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԵՏՄԵԿԵՆ, ՔԵՆԱԾՈՒԹԵԿԵՆ, ԲԵՐՈՅԱԿԱՆ ԵԽ ԵԶԳԵՑԻՆ.

ԹԻՒ Ձ. – ՇՐՋԱՆ Ձ.

1873

ՏԱՐԻ Ձ. – ՕԳՈՍՏՈՒ 31

## ԿՐՈՆԱԿԱՆ

ԼՈՒՍԱԽՈՐՉԵԱՆ ԿՈՄ ԼՈՒՍԱԽՈՐՉԱԿՈՆ,  
ԵԽ ԳՐԻԳՈՐԵԱՆ.

**Պ**օլսոյ մեր Ազգ, լրագրաց միոյն մէջ  
կարդացի՝ զի մի օտարազգի լրագիր զւայս  
Գրէժորչեան կոչելոյն համար՝ Ա. Պօլսա-  
բնակ մեր Եշկեղեցւոյ որդիներէն բազումք  
հրաժարուելով նորա բաժանորդագրու-  
թենէն՝ մերժելեն զայն արհամարհանօք :

Ըստ իրաւացի և գովելի է նոցա սոյն-  
պիսի գործը, և արդարեւ այսպէս կվայելի  
փոխանակել նոցա՝ որ անզիտանալ պա-  
տրուակելով բնիկ և հարազատ չայ եկե-  
զեցւոյն ժողովուրդը և ազգը, որ չայ ա-  
նուամբ միայն կճանաչուին, և առանց բար-  
ւոք վերահասու լինելոց նոցա կրօնի ուս-  
տի՛ ծագումն առնուլը և որոց ձեռամք  
Վրիտառուի բանին քարտզուիլ ատրածուի-  
լը, ըստ քմահանց կամս կսիրին պատուաս-  
տել չայաստանեայց ուղղափառ Եշկե-  
ղեցւոյ վերայ Գրէժորչեան անունը :

Եյս առիթը քաջայարմար պատեհ կա-  
լսյ այն ինդրոյ վերայ իմ՝ մի քանի գիտո-  
ղութիւնքը սիրելի եղբարցս ու շագրու-  
թեան յանձնել :

Եամի, ըստ ազգութեանն նկատելով,  
ոչ ոք կարող է մի փաստով ապացուցա-  
նել թէ՝ մեք չեմք բուն չայք, և թէ չայ  
— ազգութիւնը կազմող ամենամեծագոյն  
մի ուրիշ մասն ժամանակով կայր՝ յոր-  
մէ մեք զատեալ բաժանեալ լինէաք, որպէս  
զի հարկն ստիպէր Գրէժորչեան, լուսա-  
կան և կամ մի այլ բացայացող ածակա-  
նաւ զմեղ ճանաչեցուցանել օտար ազգաց :

Մէկ ազգի անունը սկսեալ ի չայկայ՝  
չայ է միշա՝ թէ ի ժամանակի կռապաշ-  
տութեան, և թէ Վրիտառնէութեան։ Ի  
սկզբանէ անտի մեղ սահմանակից գըտ-  
նուած համայն օտարազգիք՝ Յօնք, Ասո-  
րիք, Պարսիկք, և այլք, չայ (կամ թէ  
Երմէն կամ Երմէն) անուանած են զմեղ  
և ճանաչած և պատմազրած։

Մէկ Ազգացին և Եշկեղեցական պատ-  
միչք՝ ինչպէս Վերուրնա, Ազաթանգեղոս,

Պովսէս, Եղիշէ և այլք, իւրեանց պատմագրութեանց մէջ երբէք չեն յիշատակել Հայոց համար մի ուրիշ անուն, բայց եթէ երբեմն մեր զիւցազանց անուամբք Թորգումական, Արամեան, Վաքանազեան ասած են :

Ուստի մեք բուն և հարազատ Հայք լինելովս, մեր մայրենի ազգութիւնը Հայ անուամբ բաւական է ճանաչել և ճանաչեցուցանել :

Երկրորդ, ըստ կրօնականին նկատելով, Քրիստոնէական Եկեղեցւոյ մէջ սովորութիւն է միայն Ընդհանուր Եկեղեցին բաժնուած խումբերը՝ իւրեանց աղանդապետց անուամբք կոչել, զօ, Արիստեանք, Կեստորականք, Եւտիքականք, Յակոբիկք Եռամերականք, Կալվինականք և այլք բազումք անուանեալ են :

Խսկ ուղղափառ Եկեղեցիք՝ որք Ծնկհ. Եկեղեցին կկազմեն, և ունին Վառքելական Եթոս, և ի հաւասս ող ջամփաք են, կիուսին իւրեանց պատկանած և սեպհականած Եկեղեցւոյ և աղքաց անուամբք՝ ինչպէս Եկեղեցի Հայոց, Եկեղեցի Հռովմայց; Եկեղեցի Հունաց են:

Ինչպէս այլ առաքելական Եկեղեցիք, նոյնպէս և մեր Հայուստանեաց Եկեղեցին ևս ունի իւր յատուկ թաղէոս և Բարթողիմէոս Վառքելաները, և նոցա քարոզութեամբք և ջանիսք հիմնուելով, Քըրիստոսական է և Վառքելական Եթոս ունի, ո իւր հաւատոյ և հնաւանդ դաւանութեանց հաւատարիմ և հարազատ, ծեսիս և արարողութեանց զրեթէ նախնական անփոփոխ յարաւեռութեամբ և պարզութեամբ շարունակուած է մինչեւ Դոյտոր, ուրիմն աւելորդ է մեր Եկեղեցւոյ

սեպհական անուան վերայ մի այլ ածական կամ անուն ևս յաւելուլ:

Մեր Եզրի և Եկեղեցւոյ համանգամյն ամբողջ ջութեան անունն էր և է և եղիցի յաւիտեան Հայ և Հայոց :

Բայց Միարարաց (Ունիթուաց) ազգակործան ոտքերը ի Հայաստան կոխելին զինի, իւրեանց ցանած բաղմաննաս որումանց շնորհիւ բուսան մեր Եզրի մէջ Հրատապմէականութեան հակամիտեալ եկեղեցականք և աշխարհականք, որք զինքեանս կոչեցին Առաջական, +անուննի, և մեր եկեղեցին Հայաստանեաց կանարգէին և կերեւակայէին մողորեալ: Եւ գնալով կըբազմանային աշխարհիս շատ կոզմը այդ պապական ծուզակի մէջ որսացեալ ողորմելիքը: Եւ ահա այն գարում՝ ուր տղիտութեան վարագոյրը համայնտարած կքօղարկէր ի Հայաստան՝ գանուեցան մեր մէջ տկարամիոք՝ որ նոցա (Միարարաց և պապամոլհուվմէականնից) թելագրութեամբ և առանց ուշագրութեան պարծենալով կոչեցին զինքեանս լուսաւորական՝ ցուցանիլոյ համար թէ ինքեանք մնացել են Հայուստանեաց Լուսաւորչաց հարազատ և հաւատարիմ որդիքը: Խսկ վերջին ժամանակներս երբ բոլորովին ի մէնջ բաժանուեցան մի փոքրաթիւ +անուննի կոչուած մասն, ինքեանք և համայն աշխարհ այն բաժանեալ մասին Հայ +անուննի անունը տուին: Խսկ բուն Հայն գարձեալ իւր մայրենի Եզրին անուամբ Հայ մնաց: Յետ ժամանակաց երբ մի փոքրիկ մասն ևս հերձուեցաւ իւր արմատէն, նմին ևս անուն կոչուեցաւ Բաղրամիան կամ Լուսաւորական՝ Հայ: Եւ գարձեալ բուն Հայոց աղջեւ և Եկեղեցին մնացին իւրեանց մայրենի ա-

նուամբ և յորջորջմամբ Հայ — առ և և այսպատճեայց — Եկեղէցի:

Աակայն աստի կարելի և իրաւունք է հետեցնել՝ թէ որովհեակ կան մի քանի բաժանուած փոքրաթիւ և այլակըօն Հայեր՝ որք իւրեանց նոր յարած կրօնից պատկանեալ Եկեղեցեաց անուամբք Պապական կամ Առաքերական կը կոչվին՝ Մայրենի Եկեղեցւոյ և Ազգի հարազատ Հայերն ևս պարտին մի այլ անուամբ յորջորջիւ տարբերելոյ համար, մինչդեռ մեքրուն Հայ ազգութիւնը և միանգամայն ամենամեծագոյն մարմինը կազմելով՝ ըլնաւ կարօտութիւն չունիք մեր մայրենի և սեպհական կոչման վերայ ածանցական նոր գրոշմն տալ: Վահաւանդ զի որ և իցէ մեծ մարմինէն ուր որ լինի՝ երբ անախ մի փոքր մասն բաժանուի, յայնմամ մի որոշիւ յատկութիւն կամ անուն ընդունել պարտաւոր է բաժանեալ ման:

Աւրեմն իրաւունք է և մեք պարախմբ վերջին դարերու մէջ պապականներէն ամենայն խորամանկութեամբ և մեքենայական ճարտարակութեամբ մեր՝ Հայոց մէջ մուտ գտած լուսաբական (ինչպէս և ի նորում հնարուած Եզրածնական) բառերը առանց ուշադրութեան գործածել Լուսաբական - Հայ և Եկեղէցի կոչելով:

Եռաւել յաւալի է և այս, զի Լուսաբական բառն անգամ օտարք չկամենալով իսկութեամբ կամ բառական թարգմանութեամբ գործածել՝ զայն յեղաշրջած և սովորութիւն կալել են Գրէժորչան անունով ի կիր առնուլ, և ըստ այսմ Գրէժորչան - Հայ + \*) կոչեն զբուն Հայ՝

(\*) Այս Գրէժորչան անունը նոր հեղինակեցաւ երբ 1836ի Կանոնադրութեան (Պալաժենից) մէջ

մինչ ոչ ոք կարող է ապացուցանել ըստ արժանուոյն և ըստ օրինի՝ զի այն լուսաբական կամ լուսաբական բառը կվերաբերի Ա. Գրիգոր Պարթեհն միայն և ոչ թաղէռու և Բարթողիմէռու առաքելոց՝ որք Հայաստանեայց աւաջին լուսաւորիչներն հանդիսացել են, և ըստ այսմ կյիշատակուին և կպաշտուին Ա. Եկեղեցւոյ մէջ, իսկ Ա. Գրիգորին երկրորդ լուսաւորիչ է, ընդէր ապա լուսաւորիչը պիտի վերագրուի վերջնոյն, և նորա անուամբ լոկ հասկացուի:

Խնդիրը պէաք չէ շփոթել Թաղէռու և Բարթողիմէռու Ա. Առաքելոց և առաջին լուսաւորչաց ևս Ա. Գրիգոր Պարթեի երկրորդ լուսաւորչի Հայաստանեայց Եկեղեցւոյ վերաբերութեամբ ունեցած բազմարդիւն բարերարութեանց և ըստ այսոցիկ արժան եղած մեր նուիրական քաղցր պարտաւորութեանց հետ ի պատիւ և ի պաշտելի յիշատակս նոցաւ Այլթէ հարկ կայ մեր (Պրիստոնէտական Ֆլումարտութեանց վերայ հիմնեալ և հա-

անուշադրութեամբ լուսաբականը ի Թուս լեզու թարգմանեցին ի Գրէժորչան, և յօրէ անտի Թուսերէն գրագրութեանց մէջ սկսան գործածել Հայոց Գրէժորչան Սինու, Գրէժորչան Հայ+, և այս միջոցաւ տարածուեցաւ մինչև Եւրոպայի կողմերը, և ի տեղիս տեղիս և մեզ Գրիգորեան - Հայք կոչել սկսած են:

Այս անտեղի սխալին պատասխանատուն ՅԵՒ Կանոնադրութեան թարգմանիչն է, որ և այլ բառական սխալներ ևս մոցուցած է, կթողումք Կանոնադրութեան միւս պակասութիւնքը:

Աւստի յայսմ մասին առաւել ևս ցաւալի . . . . է Սինօդի անուշադրութիւնն և անխափը դորժածելու:

ատաեալ) Առաքելական Եկեղեցւոյ վերաց մի ոյլ անուն կցել, որպիսին յատուկէ ի բուն արմատոյ հերձեալ և հերետիկոսցեալ աղանդաւորաց խմբից միայն:

Ե վերջ բանիս կամփոփեմ յօդուածս,  
զի ցորչափ և այստանի այց Առաքելական  
Երկեղեցին սկզբնաւորեալ և հաստատեալ  
է ի Քրիստոսէ ի ձեռն Առաքելոցն Խռա-  
դեսսի և Շարթուղիմեսսի, և առաւելա-  
պէս և ընդհանրածաւալ պայծառացեալ  
է ի ձեռն Ո. Գրիգորի Պարթևի, աննե-  
րելի մեղք է իրրե աղանդաւոր ցուցանել  
և Գրէդուրէան կոչել կամ թէ ի վերջն  
գարս նօրամուտ Լուսաւորչէան կամ Եշ-  
մաժնական բառից սովորութեան առանց  
ուշադրութեան հետեւ, նա մանաւանդ  
զայն թարգմանելի Գրէդուրէան՝ բոլորովին  
սխալ է։ Եւ ի՞նչ հարկ կայ սոյնպիսի  
անուն գնել և այսց և սոցա Երկեղեցւոյ  
վերայ։

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՐ,

## ՊԱՏՄԱԿԱՆ

## ՃԱՆԱՊԱՐՀՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ

$$(\tilde{v} = \mu - \lambda - \xi - \eta_1 \eta_2)$$

卷之三

Աւանդութիւնք. Ճողովրդական նոխագավաճարումն ի մերաց անտախատին. — Կերպարանափոխութիւնն. — Ծնունդ Մհծին Ազեր սանդրի. — Այլ Դանձուց առ Երեւանաւ. — Զինէական աւանդութիւնն զվարժարութենէ Հեռավայրութեան:

10. **தென்னாட்டுக் கலைகளின் தீவிரமான விஷயங்கள்**

Յարութիւն Արտվեան ասէ, ժանտախտն է պատիմ պատուհանի ծանր յանցանաց մարդկան, երևան յիս իւրաքանչյիր եօմն ամաց առաջ

նորա ընթանան երկու հեծեալ ու ցասմածողք...  
մի ի նոցանէ զգեցեալ լինի ի հանդերձ կարմիր,  
ունեղով ի ձեռին և կարմիր մահակ. միւն ի  
սեան, կրեղով և մահակ սեաւ. յորժամ մաս-  
նեն ի քաղաքս կամ զենզու զայն՝ որ նախ հան-  
դիպի նոցա ստիպէն առաջնորդել ինքեանց ի  
տունս և նմա միայն երեխն. իսկ այլոց ոչ բնաւ.  
մուեալ ի տունս՝ մահակօքն նշան առնեն մարդ-  
կան և կենդանեաց. եթէ նշանեաց այն՝ որ ի հան-  
գերծ սեաւ, մահու է այն. իսկ թէ որ ի կարմի-  
րըն՝ կենաց: Հանին իմ՝ կին ճշմարտախօս՝ պատ-  
մեր, թէ յաւուր միում ծանօթն մեր եմուս ի  
տուն մեր, և ոչ զօք ողջունեալ, լոիկ և տիտուր  
եկաց յանկեան ուրիշ. որչափ հարցմաւնս արա-  
բին, ոչ միշյն պատասխանեաց. եղին առաջի նո-  
րա կերակուր, և առանց նորաւն ձեռաց ի նա  
միսելց ծախեցան. յետ այնորիկ յարեաւ յան-  
կարծակի այրն և ել ի տանին անխօս: Խոկ յոր-  
ժամ՝ յետ ժամանակի ի վերաց անցանելց հար-  
ցին ցն ո զիրացն, պատասխանի արար թէ փըր-  
կեցայք ի վտանգէ մահուան. ցասմածողք ո  
ստիպեցին զիս առաջնորդել նոցա ի տունս ձեր,  
և տեսեալ զբարեսիրտ շարժմաւնս և ընտանեկան  
ուրախութիւնս ձեր, ասացին. վես և ոչ մի հա-  
սուսցուք հիւրասէր տանս. և ի ցցց սիրոյ կերին  
զհաց ձեր և ելին ի գեղջէն: — Աւամիկ ժողովը-  
գականք Առուսաց, Լեհացիք, Սելլք, (և թուրիթէ  
նաև Սլաւեանք առ հասարակ) երեակային զժան-  
տախան ի նմանութիւն կնոջ, անուն տուեալ նմա  
«Սերբիյ կուղ»: Յաշխատութեան մերում՝ ի  
վերաց Առուսատանի, մասն Բ, երես 412: առա-  
ցեալ է թէ, այսպէս կերպարաննեն և զիսոլերացն  
(մարձայութութիւն). տեսե՞ր զիսոլերացն,, հար-  
ցանէ մալարոս ոմն ցընկերն, որ գառնայր ի Պոնէ:  
«զիարդ ոչ տեսից...» — «յորպիսի կերպարան և  
նմանութեան տեսեր զինա,, . — «ի կերպարանս  
կնոջ, որ ունէր յոտս կարմիր կօշիկու ընթանայր  
ի վերաց ջրոց. և անզադար թառաջ արձակէր. .  
Հեն - Լեհացի մոտիապաշտութիւնն երեակայէ  
զնախընթացն կամ զառաջնորդ ժանտախտի ի վե-  
րաց երկանիւ սայլի. ի մոտանել ասեն ի շէնս ինչ,  
եթէ զոյի անդէն բացեալ լուսամուտ կամ տուն,  
ապառէ ի նա ունենի իւր եսումիւ թառեննական